Ց Ա Ն Կ
ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ՝ N 2 ձևի:

2.* Ավտոբուսների գրանցման վկայագրեր (ժամանակավոր կտրոն):

3.*Ավտոբուսի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի առկայությունը հավաստող փաստաթուղթ:

4.* Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ:

5. Հավաքակայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթեր:

6. Հաշմանդամություն ունեցող անձանց փոխադրելու նպատակով վերասարքավորված ավտոբուսների համար լիազոր մարմնի կողմից տրամադրված վերասարքավորման թույլտվության մասին որոշում:

7. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի փոխադրավարձը:

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կողմից սոսնձված և ստորագրված փաթեթով:

*Չի ներկայացվում հայտ-պարտավորագիր ներկայացնելու դեպքում

- Երթուղիների ամփոփ չվացուցակները զետեղված է Երևանի պաշտոնական համացանցային կայքում (www.yerevan.am), «Քաղաքային տնտեսություն» բաժնի «Տրանսպորտ» ենթաբաժնում՝ «Երթուղային ցանց»:
- Մրցույթն անց է կացվելու ժամը 10^{00}-ին, Լենինգրադյան 16 հասցեում.
- Մրցույթի մասնակցության հայտերն ընդունվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչությունում (հասցեն՝ Բուզանդի 1/3).
- Հայտերը ներկայացվում են հայտարարությունը հրապարակվելուց հետո 7 օրվա ընթացքում (մինչև 23.03.2022թ., ժամը 18^{00}-ին).
- Փաթեթները բացվելու են 24.03.2022թ. ժամը 16^{00}-ին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչությունում (հասցեն՝ Բուզանդի 1/3):
- Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 011.514198 հեռախոսահամարով, էլեկտրոնային փոստի հասցեն՝ transport@yerevan.am:

Մրցույթներն անցկացվում են ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի հ.1994-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների համաձայն: